ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» հունիսի 2025թ. ք. Երևան № 20-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 05-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կնիքների, դրոշմակնիքների և ծառայողական միասնական նմուշի վկայականների նկարագրերը և տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 05-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՆԻՔՆԵՐԻ, ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) Հրամանի 1-ին կետում «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կնիքների, դրոշմակնիքների և ծառայողական միասնական նմուշի վկայականների նկարագրերը և տրամադրման կարգը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների կնիքների, դրոշմակնիքների, ծառայողական

վկայականների, ինչպես նաև Կոմիտեի ծառայողների միասնական նմուշի վկայականների նկարագրերը և տրամադրման կարգը» բառերով.

3) Հրամանի հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՆԻՔՆԵՐԻ, ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ».

4) Հրամանի հավելվածի բոլոր տեղերում «միասնական նմուշի» բառերը հանել, իսկ Հրամանի հավելվածի 1.2-րդ կետում «միասնական ծառայողական» բառերը փոխարինել «ծառայողական» բառով.

5) Հրամանի հավելվածի 1.1-ին կետում 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների վկայականները տրամադրվում են ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 10-ի 1847-Լ որոշմամբ սահմանված կարգով՝ ՀՀ վարչապետի ստորագրությամբ:»:

6) Հրամանի հավելվածի 2-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(Հավելված 1)

2.1. Կոմիտեի ծառայողի (սույն գլխի իմաստով Կոմիտեի ծառայող են հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների), օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար, աշխատողներ) վկայականը բաղկացած է պատյանից, անվանական ներդիրից և Կոմիտեի ծառայողի անհատականացման համարի նշումով՝ Կոմիտեի տարբերանշանից: Վկայականի պատյանը պատրաստված է սև բնական կաշվից, որի չափսերն են 100մմ x 150մմ:

2.2. Վկայականի կաշվե պատյանը մեջտեղից բացվող է, ունի վերին և ստորին գրպանիկներ: Վերին գրպանիկի արտաքին մակերեսը թափանցիկ նյութից է, նախատեսված է անվանական ներդիր տեղադրելու համար, ստորինը՝ բնական կաշվից, որի միջնամասը 50 մմ տրամագծով կաշվե մակերևույթ է, որի վրա տեղադրվում է տարբերանշանը:

2.3. Վկայականի կազմի վերին թափանցիկ գրպանիկում տեղադրվում է Կոմիտեի ծառայողի լուսանկար պարունակող, երկկողմանի գրառումներ ունեցող, 85 x 55 մմ չափսի ներդիրը:

2.4. Ներդիրի դիմերեսը կազմված է աջ և ձախ հատվածներից: Ձախ հատվածում դրվում է Կոմիտեի ծառայողի 35x45 մմ չափսի գունավոր, դիմահայաց լուսանկարը՝ համազգեստով (մուգ կապույտ բաճկոնով, սպիտակ վերնաշապիկով և փողկապով), պարզորոշ երևացող ուսադիրներով, իսկ լուսանկարի ստորին աջ անկյունում դրվում է Հայաստանի

Հանրապետության զինանշանի պատկերով կնիքի ուրվագիծն այնպես, որ դրա մի մասը լինի լուսանկարի վրա: Լուսանկարի ներքևի ձախ անկյունում տպագրվում է «Ուժի մեջ է …» գրառումը, իսկ բազմակետի փոխարեն լրացվում է համապատասխան օրը, ամիսը, տարեթիվը: Ներդիրի աջ հատվածի կենտրոնական մասում՝ ոչ արտահայտիչ երանգով, տեղադրվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Վերին աջ անկյունում հայերեն մեծատառերով, մեկ տողով, հոծ սև գույնով տպագրվում է «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ**» գրառումը, որը ներդիրի մնացած մասից անջատվում է հորիզոնական գծով: Հորիզոնական գծից ներքև՝ հայերեն մեծատառերով, հոծ սև գույնով տպագրվում է «**ՎԿԱՅԱԿԱՆ №…**» գրառումը՝ բազմակետի փոխարեն լրացնելով տվյալ վկայականի հերթական համարը, որի տակ հոծ սև գույնով տպագրվում են՝ Կոմիտեի ծառայողի անունը, հայրանունը, ազգանունը, որի տակ ոչ հոծ սև գույնով՝ ստորաբաժանման անվանումը, զբաղեցրած պաշտոնը և դասային աստիճանը: Ներդիրի աջ հատվածում՝ ՀՀ զինանշանից ներքև՝ ձախ անկյունում, հայերեն մեծատառերով, հոծ սև գույնով տպագրվում է «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**» գրառումը, որի տակ հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով տպագրվում է Կոմիտեի նախագահի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (առաջին տառը մեծատառ, մնացածը՝ փոքրատառ), իսկ նշված գրառումների դիմաց՝ միջնամասում, դրվում է վերջինիս ստորագրությունը: Աջ հատվածի վերջին տողում առաջին տառը հայերեն մեծատառ, մնացածը՝ փոքրատառ տպագրվում է «Զենք պահելու և կրելու իրավունքով» գրառումը:

2.5. Ներդիրի դարձերեսը բաղկացած է 2 հատվածներից՝ վերին և ստորին, որոնք նախատեսված են ռուսերեն և անգլերեն գրառումների համար: Ներդիրի դարձերեսի կենտրոնական մասում՝ ոչ արտահայտիչ երանգով, տեղադրվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Ներդիրի դարձերեսին՝ վերին հատվածում, հոծ սև գույնով ռուսերեն տպագրվում է **«АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РА»** գրառումը, որը ներդիրի դարձերեսի մնացած մասից անջատվում է հորիզոնական գծով: Հորիզոնական գծից ներքև սև գույնով, գլխատառերով գրվում է **«УДОСТОВЕРЕНИЕ № … »** գրառումը, իսկ բազմակետի փոխարեն լրացվում է տվյալ վկայականի հերթական համարը: Հերթական համարի տակ առաջին տառերը ռուսերեն մեծատառ, մնացածը՝ փոքրատառ տպագրվում են՝ Կոմիտեի ծառայողի անունը, հայրանունը, ազգանունը, որի տակ ոչ հոծ, սև գույնով տպագրվում են ստորաբաժանման անվանումը, զբաղեցրած պաշտոնը և դասային աստիճանը: Դասային աստիճանի տակ՝ կենտրոնական հատվածում, ոչ հոծ սև գույնով, առաջին տառը ռուսերեն մեծատառ, մնացածը՝ փոքրատառ տեղադրվում է «Право на хранение и ношение оружия» գրառումը: Իսկ ստորին հատվածում հոծ սև գույնով, բոլոր բառերը անգլերեն մեծատառերով տպագրվում է **«ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA»** գրառումը, որը ներդիրի դարձերեսի մնացած մասից անջատվում է հորիզոնական գծով: Հորիզոնական գծից ներքև ոչ հոծ սև գույնով, անգլերեն մեծատառերով գրվում է **«CERTIFICATE № … »** գրառումը, իսկ բազմակետի փոխարեն լրացվում է տվյալ վկայականի հերթական համարը: Հերթական համարի տակ առաջին տառը անգլերեն մեծատառ, մնացածը փոքրատառ տպագրվում են Կոմիտեի ծառայողի անունը, ազգանունը, որի տակ ոչ հոծ սև գույնով տպագրվում է ստորաբաժանման անվանումը, զբաղեցրած պաշտոնը և դասային աստիճանը: Դասային աստիճանի տակ՝ կենտրոնական հատվածում, ոչ հոծ սև գույնով, առաջին տառը

անգլերեն մեծատառ, մնացածը փոքրատառ տեղադրվում է «The right to keep and bear arms» գրառումը:

2.6. Վկայականի կաշվե պատյանի ստորին գրպանիկի տարբերանշանը Կոմիտեի ծառայողի վկայականի համարով արույրե մետաղանիշ է, որի վրա դրոշմված են Կոմիտեի ծառայողի անհատականացման համարը և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը:

2.7. Վկայականի կաշվե պատյանի ստորին գրպանիկի տարբերանշանի դիմերեսին՝ ներքևում, կիսաշրջանաձև տեղակայված է ժապավեն, որի վրա կորաձև հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով գրված են «**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ**» բառերը: Տարբերանշանի դիմերեսի ուռուցիկ և զարդանախշ կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը: Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշի վերևում կորաձև, աղեղանման հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով գրված են «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**» բառերը: «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**» բառերի վերևում կորաձև, աղեղանման տեղակայված են ՀՀ դրոշի գույները՝ կարմիր, կապույտ և նարնջագույն: ՀՀ դրոշի գույների վերևում կորաձև, աղեղանման հոծ սև գույնով, անգլերեն և ռուսերեն մեծատառերով գրված են «**ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA**» և «**АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**» բառերը: Տարբերանշանի դարձերեսին նշվում է Կոմիտեի ծառայողի անհատականացման համարը:

2.8. Կոմիտեի ծառայողի անհատականացման համարը և վկայականի համարը նույնն են:

2.9. Տարբերանշանը երկշերտ լաքապատված է, դարձերեսին ամրացված է պտուտակ-պնդօղակով՝ պատյանին փակցնելու համար:

2.10. Կոմիտեի աշխատակիցների (սույն գլխի իմաստով Կոմիտեի աշխատակիցներ են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները) վկայականը պատրաստվում է կաշվից կամ կաշվի փոխանյութից՝ 10x7սմ չափերի: Ունի մուգ շագանակագույն գունավորում:

2.11. Կազմի դիմերեսի արտաքին միջնամասում վերևից պատկերվում է Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը՝ 2,5x2,5սմ չափերի, որից ներքև ոսկեգույն, բոլոր բառերը մեծատառերով, 3 տողով հայերեն տպագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը:

2.12. Դարձերեսի վերին հատվածում երեք տողով, ոսկեգույն, բոլոր բառերը մեծատառերով ռուսերեն տպագրված է «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ» բառերը, իսկ ստորին հատվածում երկու տողով, ոսկեգույն, բոլոր բառերը մեծատառերով անգլերեն տպագրված է «REPUBLIC OF ARMENIA ANTI-CORRUPTION COMMITTEE» գրառումը:

2.13. Վկայականի ներսի աջ և ձախ կողմերում փակցված է 9x6սմ չափերի սպիտակ-դեղին գծանախշով մեկական ներդիր՝ կենտրոնում ուրվագծված գունավոր զինանշանով:

2.14. Վկայականի ձախ ներդիրի վերևի կենտրոնական մասում հոծ սև գույնով, բոլոր բառերը մեծատառերով հայերեն գրված է «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ**» գրառումը՝ ներքևից ընդգծված հոծ գծով: Ներդիրի ձախ եզրային մասում փակցված է Կոմիտեի աշխատակցի՝ 3x4սմ չափի գունավոր դիմահայաց լուսանկարը:

2.15. «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ**» գրառման ընդգծված հոծ գծից ներքև աջ անկյունում հոծ սև գույնով և մեծատառերով գրված է «ՎԿԱՅԱԿԱՆ» և հերթական համարը (№), դրանից ներքև հոծ սև գույնով և բոլոր բառերը մեծատառերով գրված են **ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ՊԱՇՏՈՆԸ**:

2.16. Վկայականի ձախ ներդիրի ներքևում՝ լուսանկարից աջ, ավելի փոքր տառաչափերով և հոծ սև գույնով, բոլոր բառերը մեծատառերով գրված է «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**» կամ «**ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**», որի տակ թողնված է ստորագրության տեղը, ապա հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով գրված է Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի գլխավոր քարտուղարի անվան-հայրանվան առաջին տառերը, ինչպես նաև ազգանունը՝ ամբողջությամբ:

2.17. Վկայականի ձախ ներդիրի ներքևի մասում՝ Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի գլխավոր քարտուղարի ստորագրության տակ՝ կենտրոնականում հատվածում, ավելի փոքր տառաչափերով հայերեն գրված են «ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄԻՆՉԵՎ …» գրառումը, իսկ բազմակետի փոխարեն լրացվում է համապատասխան օրը, ամիսը, տարեթիվը:

2.18. Կոմիտեի Աշխատակցի վկայականի ձախ ներդիրի՝ Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի գլխավոր քարտուղարի ստորագրության և լուսանկարի մի մասի վրա դրվում է Կոմիտեի՝ զինանշանով փոքր կլոր կնիքը:

2.19. Վկայականի աջ ներդիրի վերևում հոծ սև գույնով, բոլոր բառերը մեծատառերով ռուսերեն գրված է «**АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РА**» գրառումը՝ ներքևից ընդգծված հոծ գծով, որի տակ աջ անկյունում հոծ սև գույնով, ռուսերեն մեծատառերով գրված է «**УДОСТОВЕРЕНИЕ**» և հերթական համարը (№), որի ներքևում հոծ սև գույնով, բոլոր բառերը մեծատառերով ռուսերեն գրված է **ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ**, որից ներքև ոչ հոծ, սև գույնով՝ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՊԱՇՏՈՆԸ:

2.20. Վկայականի աջ ներդիրի ռուսերեն գրառումներից ներքև հոծ սև գույնով, բոլոր բառերը անգլերեն մեծատառերով գրված է «**ANTI-CORRUPTION COMMITTEE OF RA**»՝ ներքևից ընդգծված հոծ գծով, որի տակ՝ աջ անկյունում, հոծ սև գույնով, բոլոր բառերը անգլերեն մեծատառերով գրված է «**CERTIFICATE**» և հերթական համարը (№), որի ներքևում հոծ սև գույնով, բոլոր բառերը անգլերեն մեծատառերով գրված է **ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**, որից ներքև ոչ հոծ սև գույնով՝ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՊԱՇՏՈՆԸ:

2.21. Վկայականի աջ ներդիրի ներքևի ձախ եզրային անկյունում դրվում է Կոմիտեի՝ զինանշանով փոքր կլոր կնիքը:»:

7) Հրամանի հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

8) Հրամանի հավելվածի 4.1.-4.3.-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Վկայականը տրվում է Կոմիտեի Աշխատակիցներին:

4.2. Վկայականը տրվում է հրամանագրվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, 5 տարի ժամկետով: Առաջին անգամ վկայական ստացած Կոմիտեի Աշխատակիցների վկայականների ժամկետը սկսում է հաշվարկվել հրամանագրվելու հաջորդող օրվանից:

4.3. Վկայականի ժամկետը լրանալու օրվանից 7 օր առաջ Կոմիտեի աշխատակիցը պարտավոր է վկայականը ներկայացնել Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին՝ միաժամանակ ներկայացնելով դիմահայաց, 3x4սմ չափի 2 գունավոր լուսանկար՝ նոր

վկայական ստանալու նպատակով: Նոր վկայականի ժամկետը սկսում է հաշվարկվել վկայականի ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից:».

9) Հրամանի հավելվածի 4.4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

2. Մինչև սույն հրամանով սահմանված վկայականների ձեռքբերումը Կոմիտեի ծառայողներին տրամադրվում են մինչև սույն հրամանն ուժը մեջ մտնելը գործող՝ Կոմիտեի միասնական նմուշի ծառայողական վկայականները:

3. Սույն հրամանով սահմանված Կոմիտեի ծառայողների վկայականների դեպքում իրականացվում է եռանիշ համարակալում՝ «000», իսկ Կոմիտեի աշխատակիցների վկայականների դեպքում՝ երկնիշ համարակալում՝ «00»:

4. Սույն հրամանով սահմանված Կոմիտեի աշխատակիցներին տրամադրված վկայականները երկնիշ համարակալումով վկայականներով փոխարինվում են հնարավորինս սեղմ ժամկետներում:

5. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության պետին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության
առաջին դասի խորհրդական՝ 04.06.2025

X ***Ա.Ա. Նահապետյան***

Подписано: NAHAPETYAN ARTUR

«Հավելված 1

Կոմիտեի ծառայողի վկայականի նմուշ–օրինակ
(Դիմերես)

<u>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե</u>

Վկայական № ---

Անուն, Հայրանուն

Ազգանուն

Պաշտոն

Դասային աստիճան

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ուժի մեջ է մինչև « » 20 թ.

Ա.Հ. Ազգանուն

Զենք պահելու և կրելու իրավունքով

(Դարձերես)

АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РА

УДОСТОВЕРЕНИЕ № ---

Фамилия, Имя, Отчество

Должность,

Классный чин

Право на хранение и ношение оружия

ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA

CERTIFICATE № ---

Name, Surname

Position,

Rank

Right to keep and bear arms

(Տարբերանշան)

Կոմիտեի աշխատակիցների վկայականների նմուշ-օրինակներ

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

ՎԿԱՅԱԿԱՆ № ---

ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ

ԱԶԳԱՆՈՒՆ

ՊԱՇՏՈՆ

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.Հ. ԱԶԳԱՆՈՒՆ

Ուժի մեջ է մինչև « » --- 20---թ.

АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РА

УДОСТОВЕРЕНИЕ № ---

ФАМИЛИЯ, ИМЯ, ОТЧЕСТВО

ДОЛЖНОСТЬ

ANTI-CORRUPTION COOMMITTEE OF RA

CERTIFICATE № ---

NAME, SURNAME

POSITION

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

ՎԿԱՅԱԿԱՆ № ___

ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ

ԱԶԳԱՆՈՒՆ

ՊԱՇՏՈՆ

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Հ. ԱԶԳԱՆՈՒՆ

Ուժի մեջ է մինչև « » --- 20---թ.

АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РА

УДОСТОВЕРЕНИЕ № ---

ФАМИЛИЯ, ИМЯ, ОТЧЕСТВО

ДОЛЖНОСТЬ

ANTI-CORRUPTION COOMMITTEE OF RA

CERTIFICATE № ---

NAME, SURNAME

POSITION

»: